

ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐ

ՏԱՐԵԿԱՆ
ՈՒՂԵՑՈՅՑՑ-ԾՐԱԳԻՐ
ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ



ՍԱՂՄՈՍՆԵՐ, ԱՂՕԹՔՆԵՐ, ԾԱՐԱԿԱՆՆԵՐ
ԵՒ ԵՐԳԵՐ

ԿԱԶՄԵՑ ԵՒ ՊԱՏՐԱՍՏԵՑ
Գերադ. Տ. Միոսոն Ծ. Վրդ. Ազնիկեան

**ՆԻՒԹԵՐՈՒ Եւ ԴԱՍԱՀԱՆԴՈՒԹԵԱՆՑ
ԾՐԱԳՐԻ ԱՄՍԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ**

ՍԵՊԵՄԵՄԲԵՐ

- Վերամուտ եւ Արձանագրութիւն
- Տօն Վերացման Ս. Խաչի
- Տօն Վարագայ Ս. Խաչի

ՀՈԿՏԵՄԲԵՐ

- Վերամուտ, Մշակոյթի Ամիս – Ս. Սահակ-Մեսրոպ եւ Թարգմանիչ Վարդապետներ
- Տօն Ամենայն Սրբոց
- Տօն Գիւտ Ս. Խաչի

ՆՈՅԵՄԲԵՐ

- Տօն Հրեշտակապետաց
- Տօն Գոհաբանութեան / Հնտանիքի եւ Երիտասարդաց եւ մանկանցօր

ԴԵԿՏԵՄԲԵՐ

- Տօն Առաքելոց եւ Առաջին Հուսաւորչաց Մերոց Ս. Թաղէսոսի եւ Ս. Բարթողիմէոսի
- Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետ
- Ս. Դաւիթ Մարգարէ, Ս. Յակոբոս, Ս. Պետրոս եւ Ս. Պողոս Առաքեալներ
- Տօն Ս. Ծննդեան Ամերիկեան եւ Արեւմտեան Երկիրներու / Ս. Ստեփանոս Նախավկայ եւ Առաջին Սարկաւագ

ՅՈՒՆՈՒԱՐ

- Ամանոր եւ Հայկական Ս. Ծնունդ կամ Աստուածայայտնութիւն
- Անուանակոչութիւն Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի

**SUPERINTENDENT'S MONTHLY
REMINDER CALENDAR**

SEPTEMBER

- Registration and Sunday School's Opening Day
- Elevation of The Holy Cross
- Holy Cross of Varak

OCTOBER

- Armenian Cultural Month – St. Sahag, St Mesrob, and Holy Translators
- Halloween (All Saints Eve)
- Discovery of The Holy Cross

NOVEMBER

- Feast of the Archangels
- Thanksgiving / Youth and Family Day

DECEMBER

- Feast of First Illuminators: St. Thaddeus and St Bartholomew
- St. James of Mdzpin
- St David the Prophet, Apostles St. James, St Peter and St. Paul
- American Christmas
- Feast of St. Steven

JANUARY

- New Year
- Armenian Christmas and Theophany
- Naming of Our Lord

ՓԵՏՐՈՒԱՐ

- Ս. Վարդանանց
- Տեառնընդառաջ
- Բուն Բարեկենդան

ՄԱՐՏ

- * Երբեմն Մեծ Պահքը Մարտ Ամսուան կը չանդիպի, Նմանապէս Ծաղկազարդը, Աւագ Շաբաթն ու Զատիկը Մարտ Ամսուան Ընթացքին կը Տօնախմբուին
- Ս. Քառասնից Մանկանց
- Ս. Գրիգոր Լուսաւորիչ (Յիշատակ Մուտն ի Վիրապ)

ԱՊՐԻԼ

- Ծաղկազարդ / Աւագ Շաբաթ եւ Ս. Զատիկ
- Յիշատակ Ապրիլեան Նահատակաց

ՄԱՅԻՍ

- Կարմիր / Կանաչ Կիրապի
- Մայրերու Օր
- Համբարձում
- Հոգեզալուստ

ՅՈՒՆԻՒՍ

- Ս. Գրիգոր Լուսաւորիչ (Յիշատակ ելն ի Վիրապէն)
- Ս. Հռիփսիմէ եւ Ս. Գայիանէ
- Տօն Ս. Էջմիածնի / Հայրերու Օր

ՅՈՒԼԻՍ

- Տօն Երկուսասան Առաքելոց եւ Ս. Պօղոսի
- Տօն Այլակերպութեան / Վարդապառ

ՕԳՈՍՏՈՍ

- Վերափոխումն Ս. Աստուածածնի

FEBRUARY

- St. Vartanants
- Presentation
- Poon Paregentan

MARCH

*Sometimes Lent Begins in March & Palm Sunday, Holy Week/Easter may also be in March

- Forty Martyrs
- St. Gregory the Illuminator's Descent into the Dungeon

APRIL

- Palm Sunday
- Holy Week/ Easter
- April 24, Commemoration of the Armenian Genocide

MAY

- Green / Red Sunday
- Mother's Day
- Ascension
- Pentecost

JUNE

- St. Gregory the Illuminator's Delivery from the Dungeon
- St. Hripsimeh and St. Gaianeh
- Feast of Holy Etchmiadzin
- Father's Dsay

JULY

- Twelve Apostles and St. Paul
- Transfiguration / Vartavar

AUGUST

- Assumption of the Virgin Mary

ՀԱՅՅ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿԱՐԵՎՅ ԴՊՐՈՅՆԵՐՈՒ ՏԱՐԵԿԱԼՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱԼ ԾՐԱԳԻՐ

ՈՒԽՏ

Ես զաւակն եմ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ, զոր հիմնեցին Թաղէոս ու Բարթողիմէոս Առաքեալները: Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ ու Մեծն Ներսէս, Սահակ Պարթեւ ու Մեսրոպ Մաշտոց, Օձնեցի ու Նարեկացի, Շնորհալի ու Տաթեւացի մեծ Հայրապետներն ու վարդապետները պայծառացուցին զայն: Անոր պահպանութեան, պաշտպանութեան եւ յաւերժացման համար անթիւ ու անհամար նահատակներ, մարտիրոսներ ու վկաներ իրենց արիւնը թափեցին:

Պիտի պաշտեմ Աստուածս, պիտի կարդամ, սորվիմ ու հետեւիմ Աւետարանի ուսուցումներուն: Հաւատարիմ պիտի մնամ Հայ Առաքելական Եկեղեցւոյ դաւանանքին, անոր Միւռոնին, Աւանդութիւններուն, ու պատուէրներուն եւ կեանքովս պիտի պաշտպանեմ անոր անկախութիւնը:

Կարողութեանս առաւելագոյն չափով՝ պիտի պաշտպանեմ Ազգիս եւ Եկեղեցիկա պատիւը եւ իմ մասնակցութիւնս պիտի բերեմ իմ ժողովուրդիս եւ Հայրենիքիս յառաջդիմութեան ու վերելքին:

Պիտի ըլլամ հաւատարիմ քաղաքացին բնակած երկրիս եւ պիտի սատարեմ անոր բարգաւաճումին: Միշտ պատրաստ պիտի ըլլամ անձնական շահս եւ փառքս զոհելու՝ Եկեղեցիկա, Ազգիս, Հայրենիքիս եւ մարդկութեան ծառայութեան եւ Աստուծոյ փառքին համար:

Ա.- ԼՍԱՐԱՆԱՅԻՆ ԲԱԺԻՆ

Կը մասնակցին դպրոցի բոլոր աշակերտները հաւաքաբար:

Բ.- ԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԲԱԺԻՆ

Հաւաքական պահէն ետք, աշակերտները կը ցրուին իրենց յատուկ դասարանները ըստ կարգերու, ուր տեղի կ'ունենայ համապատասխան ուսուցում:

Ա.- ՀՍԱՐԱՆԱՅԻՆ ԲԱԺԻՆ

- **Տէրունական աղօթք**
 - **Սաղմոսի ուսուցում [10 վայրկեան]**
 - **Մաղթանք/աղօթքի ուսուցում [10 վայրկեան]**
 - **Շարականի ուսուցում [10 վայրկեան]**
 - **Ճաշու Աւետարանի ընթերցումէն առաջ երգել**
 - Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ
- Որ խաչեցար վասն մեր ողորմեա մեզ: «Խաչի տօներուն»
- Որ ծնար եւ մարմնացար, ողորմեա մեզ: «Ծննդեան տօներուն»
- Որ յարեար ի մեռելոց, ողորմեա մեզ: «Յարութեան Կիրակիներուն»
- Որ եկիր ի փոխումն մօր քո եւ կուսի, ողորմեա մեզ: «Աստուածածնայ»
- **Նախընտրաբար ըստ Տօնացոյցի Կիրակի օրուան ճաշու Աւետարանի ընթերցումը կատարել եւ համապատասխան բացատրութիւններ տալ:** [15 վայրկեան]
 - **Անդրադառնալ կրօնական-ազգային տօներուն [5 վայրկեան]**
 - **Թելաղրութիւններ եւ ծանուցում-յայտարարութիւններ [5 վայրկեան]**
 - **Կամաւոր նուէրներու հաւաք**
 - **Կիրակնօրեայի քայլերդ**

Բ.- ԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄ

Իւրաքանչիւր դասարան իր կարգին համապատասխան ուսումնական ծրագիրի հետեւելու է: [45 վայրկեան]

ՆԱԽԱԳԻԾ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ

Հայ եկեղեցին այն միջավայրն է ուր մենք առիթը կ'ունենանք ծանօթանալու մեզի տարեկից մանուկներու եւ պատանիներու եւ անոնց հետ միասնաբար կը սորվինք ճանչնալ ու սիրել Աստուած, Աստուածաշունչ մատեանը, մայրենի մեր եկեղեցին շարականները աղօթքներն ու երգերը:

The Armenian Church is a special place for us where we can make friends, hear and learn about God, the Bible and the history of the Armenian Apostolic Church; its faith, prayers, and sacred hymns.

**Մաղթերգ
Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու**

Խօսք՝ Կարապետ Փափազեան

Կիրակնօրեայ Սուրբ յարկին
Մենք սաներն ենք լուսաբաղձ,
Կայծերու պէս լուսածին
Ցայտած՝ սրտէն պերճ նախնեաց:
Ուստի քալենք անխըռով,
Ո՞վ հարազատ զարմ արի,
Հաւատաւոր գընացքով՝
Լոյս-աղբիւրին ցանկալի:

Եկեղեցին սրբազգեաց՝
Ժառանգ անգին, հրաշափառ,
Մեր խոյանքին վերասլաց
Թափին է խիզախս բոցավառ.
Հայ մըշկահոտ սրբութեան
Բոյրովն օծած մեր հոգին,
Մեր երթին մէջ յաղթական՝
Թումբերն ամէն պիտ' փըշոի՛ն:

Կէցցե՛ն յաւերժ, անսասան,
Հիմնադիր եւ բարերար ,
Կիրակնօրեայ լուսոյ տան
Զահակիրներ վեհաբառ:
Հնչեցէ՛ք յար, ծնծղանե՛ր
Մեր սրտերուն ցնծագին,
Որ վառ մընայ դարեր դեռ՝
Սրբաճաճանչ Հայ հոգին...:

Մաղթերգ
Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու

Երաժշտութիւն՝ Ցակոբ Նալպանտեան

Չափաւոր:

PIANO

Կի ըակ նօր եա յ սուրբ յար կին մենք սա ներն ե նք լու սա բաղձ
կայ ծե ըու պէս ըու սա ծին ցայ տած սըր տէ ն պերճ նախ նեաց:
Ուս տի քալե նք ան իսր ոռով, ով հա ըա զա տ զարմ ա րի, *Fine*
հա ւա տա ւոր զը նաց քով լոյս աղ րիւ րի ն ցան կա լի: